# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**04 մայիսի 2017 թվականի N 87-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի N 191-Ա ԵՎ N 192-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի N 25-Ն հրամանի N 1 հավելվածի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի օգոստոսի 11-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Աբովյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը կից հասարակական հիմունքներով գործող սոցիալական համագործակցության համակարգող խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին»* N 191-Ա որոշման 1-ին կետը 10-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով՝

***«11) Սպարտակ Վարդանյան - անդամ - Աբովյան համայնքի բնակիչ:»:***

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի օգոստոսի 11-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Հրազդանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը կից հասարակական հիմունքներով գործող սոցիալական համագործակցության համակարգող խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին»* N 192-Ա որոշման 1-ին կետը 10-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով՝

***«11) Լիանա Սուքիասյան - անդամ - Հրազդան համայնքի բնակիչ:»:***

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ — Ա. ԳՈՒԼՈՅԱՆ

**2017 թվականի մայիսի 04**
**ք. Հրազդան**